

# Բանկի կայքի միջոցով տեղեկանք կամ քաղվածք պատվիրելու կանոններ

Բանկի կայքի միջոցով տեղեկանք կամ քաղվածք պատվիրելու համար Ձեզ անհրաժեշտ է՝

1. Մուտք գործել [www.vtb.am](http://www.vtb.am) կայք,
2. Սեղմել **Պատվիրել տեղեկանք** կոճակը,



3. Լրացնել Ձեր տվյալները՝
  - 1) Անուն, Ազգանուն (լատինատառ/հայերեն/ռուսերեն),
  - 2) Անձը հաստատող փաստաթղթի սերիա, համար,
  - 3) Հեռախոսահամար (օրինակ՝ (077) 080 - 254 կամ (010) 367 – 854),
  - 4) Էլ. փոստի հասցե,

## Պատվիրել տեղեկանք

Անուն, Ազգանուն	<input type="text" value="Kristine Minasyan"/>
Անձնագրի սերիա համար	<input type="text" value="AH0244451"/>
Հեռախոսահամար	<input type="text" value="(077) 080-123"/>
Էլ. Փոստի հասցե	<input type="text" value="minasyan@mail.ru"/>

Հաջորդը

4. Սեղմել **Հաջորդը**:
5. Բացված պատուհանում լրացրեք պահանջվող քաղվածքի/տեղեկանքի տվյալները՝
  - 1) **Քաղվածք/Տեղեկանք**՝ ընտրեք պահանջվող փաստաթղթի տեսակը,

## Պատվիրել տեղեկանք

Քաղվածք/ Տեղեկանք	<input type="text" value="Հաշվի քաղվածք"/>
Տեսակ	<input type="text" value="..."/> <input type="text" value="Հաշվի քաղվածք"/> <input type="text" value="Հաշվի տեղեկանք"/>

- 2) **Տեսակ** դաշտում ընտրեք քաղվածքի/տեղեկանքի տեսակը՝

## Պատվիրել տեղեկանք

Քաղվածք/ Տեղեկանք	<input type="text" value="Հաշվի քաղվածք"/>
Տեսակ	<input type="text" value="Հաշվի քաղվածք"/> <input type="text" value="Հարսի քաղվածք"/> <input type="text" value="Վարկի քաղվածք"/> <input type="text" value="Ամսվա քաղվածք"/>
Հաշվեհամար	<input type="text" value="Հաշվե լրացված չէ"/>

3) **Հաշվեհամար** դաշտում լրացրեք այն հաշվեհամարը, որի համար անհրաժեշտ է տեղեկանքը/քաղվածքը,

→ *Եթե Դուք չեք հիշում Ձեր հաշվեհամարը, պայմանագրի համարը կամ որևէ այլ տվյալ, ապա կարող եք օգտվել Call Back ծառայությունից անմիջապես նույն պատուհանից՝ պատվիրելով զանգ Բանկի Call Center-ից՝ Ձեր հաշվի հետ կապված տվյալները ճշգրտելու նպատակով:*

#### Պատվիրել տեղեկանք

Քաղվածք/ Տեղեկանք	Հաշվի քաղվածք
Տեսակ	Հաշվի քաղվածք
Հաշվեհամար	16048006200065

→ *Լրացվում է Հաշվի քաղվածքի, Հաշվի տեղեկանքի և Վարկային գծի (օվերդրաֆտի) մասով պարտավորությունների մասին տեղեկանքի դեպքում:*

4) **Քարտի համար** դաշտում լրացրեք Ձեր քարտի համարը,

#### Պատվիրել տեղեկանք

Քաղվածք/ Տեղեկանք	Հաշվի քաղվածք
Տեսակ	Քարտի քաղվածք
Հաշվեհամար	
Քարտի համար	4561 2315 4451 2158

→ *Լրացվում է Քարտի քաղվածքի և Քարտի տեղեկանքի դեպքում:*

5) **Պայմանագրի համար** դաշտում նշեք պայմանագրի համարը,

#### Պատվիրել տեղեկանք

Քաղվածք/ Տեղեկանք	Հաշվի քաղվածք
Տեսակ	Վարկի քաղվածք
Հաշվեհամար	
Քարտի համար	
Պայմանագրի համար	ԱԳ-148207

→ *Լրացվում է Վարկի քաղվածքի, Ավանդի քաղվածքի, Ցանկացած վարկի գծով պարտավորությունների մասին տեղեկանքի և Ավանդի տեղեկանքի դեպքում:*

6) **Տեղեկանքի ամսաթիվ** դաշտում ընտրեք տեղեկանքի պատրաստման նախընտրելի ամսաթիվը,

Տեղեկանքի ամսաթիվ

Քաղվածքի ժամանակահատված

Միջնորդավճարի գանձման հաշիվ

Լեզու

7) **Քաղվածքի ժամանակահատված** դաշտում ընտրեք քաղվածքի նախընտրելի ժամանակահատվածը,

Տեղեկանքի ամսաթիվ

Քաղվածքի ժամանակահատված

Միջնորդավճարի գանձման հաշիվ

Լեզու

Նշեք Ձեր նախընտրելի մասնաճյուղը ստացման համար

8) **Միջնորդավճարի գանձման հաշիվ** դաշտում լրացրեք «ՎՏԲ – Հայաստան Բանկում» գործող այն հաշվեհամարը, որից պետք է գանձվի Բանկի սակագներով նախատեսված միջնորդավճարը:

Միջնորդավճարի գանձման հաշիվ

16048006255516

*Ենթակա է գանձման Բանկում գործող սակագինը (5.1. և 5.3. կետեր) + 1000 ՀՀ դրամ*

9) **Լեզու** դաշտում ընտրեք տեղեկանքի/քաղվածքի ստացման լեզուն:

Լեզու

Նշեք Ձեր նախընտրելի մասնաճյուղը ստացման համար

Հայերեն  
Հայերեն  
Ռուսերեն  
Անգլերեն

10) **<Նշեք Ձեր նախընտրելի մասնաճյուղը ստացման համար>** դաշտում ընտրեք Բանկի այն մասնաճյուղը, որտեղից ցանկանում եք ստանալ պատվիրված տեղեկանքը/քաղվածքը:

Նշեք Ձեր նախընտրելի մասնաճյուղը ստացման համար

Մյցի ժամ

Լրացրեք եկարի եջանները

Ապարան, ք.Ապարան, Բաղրամյան 14  
Ախուրյան, Շիրակի մարզ, Գյուղ Ախուրյան, Ջրաշին Արաբկիր, ք. Երևան, Ազատության պող. հ.20 շենք, հ. Արարատ, ք. Վեդի, Արարատյան 61/1, 61/2  
Արթիկ, ք. Արթիկ, Բաղրամյան փողոց N24  
Արտաշատ, ք. Արտաշատ, Օգոստոսի 23-ի փողոց 117  
Արմավիր, ք. Արմավիր, Մյասնիկյան 15ա  
Աշտարակ, ք. Աշտարակ, Վ.Պետրոսյան 18

Ուղարկել

Call Back

11) Այցի ժամ դաշտում ընտրեք Բանկ ներկայանալու ժամը,

Տեղեկանքի ամսաթիվ	<input type="text"/>
Քաղվածքի ժամանակահատված	9:30 10:00 10:30 11:00 11:30 12:00 12:30 13:00 13:30 14:00 14:30 15:00 15:30 16:00 16:30 17:00
Միջնորդավճարի գանձման հաշիվ	
Լեզու	
Նշեք Ձեր նախընտրելի մասնաճյուղը ստացման համար	
Այցի ժամ	9:30 <input type="button" value="v"/>

12) Լրացրեք նկարի նշանները՝ լրացրեք էկրանին արտապատկերված թվերը/տառերը,

Լրացրեք նկարի նշանները	<input type="text" value="R H 8 T E"/>
	<input type="text" value="RH8TE"/>
<input type="button" value="Ուղարկել"/>	<input type="button" value="Call Back"/>

13) Սեղմեք Ուղարկել կոճակը:

## Ընդհանուր կանոններ

1. Ձեր կողմից առցանց տեղեկանքի/քաղվածքի պատվերը Բանկի պաշտոնական կայքի միջոցով ընդունված է համարվում կայքում պատասխան հաղորդագրության արտացոլվելուց հետո:
2. Առցանց տեղեկանքի/քաղվածքի պատվերն ընդունելուց հետո Բանկի Call-Center-ի աշխատակիցը կապ կհաստատի Ձեզ հետ՝ զանգահարելով Ձեր կողմից նշված հեռախոսահամարին՝ Ձեզ նույնականացնելու և Ձեր կողմից տրված տեղեկանքի/քաղվածքի պատվերը հավաստիացնելու նպատակով: Դուք իրավունք ունեք չհաստատել պատվերը, եթե տեղեկանքի/քաղվածքի պատվերը կատարվել է ոչ Ձեր կողմից: Այդ դեպքում Բանկը պատասխան հաղորդագրություն կուղարկի Ձեր կողմից հայտում նշված էլ. փոստի հասցեին՝ տեղեկանքի/քաղվածքի պատվերը չեղարկելու վերաբերյալ:
3. Ձեր կողմից նշված համարով կապ հաստատելու անհնարինության դեպքում (որի հետևանքով չի կատարվել Ձեր նույնականացումը և հավաստիացումը պատվերի վերաբերյալ), Բանկը պատասխան հաղորդագրություն կուղարկի Ձեր կողմից հայտում նշված էլ. փոստի հասցեին՝ տեղեկանքի/քաղվածքի պատվերը չկատարելու վերաբերյալ:
4. Բանկն իրավունք ունի չկատարել Ձեր տեղեկանքի/քաղվածքի պատվերը, եթե նույնականացման արդյունքում Բանկում առկա Ձեր անձը հաստատող փաստաթղթի տվյալները չեն համապատասխանում Ձեր կողմից կայքում մուտքագրված անձը հաստատող փաստաթղթի տվյալների հետ: Տվյալ դեպքում Ձեզ անհրաժեշտ է մոտենալ Բանկի մոտակա մասնաճյուղ և թարմացնել Ձեր տվյալները Բանկային ծրագրում:
5. Բանկի կողմից համապատասխան նույնականացում անցնելուց և հավաստում ստանալուց հետո, Բանկը կատարում է Ձեր կողմից պատվիրված տեղեկանքի/քաղվածքի համար Բանկում գործող

սակագներով նախատեսված վճարի + 1000 ՀՀ դրամի գանձում: Եթե Ձեր կողմից նշված հաշվին բացակայում են բավարար միջոցներ սակագներով նախատեսված վճարները գանձելու համար, ապա Բանկը չի կատարում միջոցների գանձումը՝ ուղարկելով պատասխան հաղորդագրություն Ձեր կողմից հայտում նշված էլ. փոստի հասցեին՝ տեղեկանքի/քաղվածքի պատվերը չկատարելու վերաբերյալ:

6. Բանկի կողմից սույն կանոնների 2-5 կետերի համաձայն մերժման վերաբերյալ հաղորդագրություն չստանալու դեպքում, Դուք կարող եք մոտենալ Ձեր կողմից նշված ժամին Ձեր նախընտրած մասնաճյուղ՝ պատրաստի տեղեկանքը/քաղվածքը ստանալու նպատակով:
7. Այն դեպքում, եթե մասնաճյուղ մոտենալու դեպքում նախապատրաստված տեղեկանքը/քաղվածքը չի համապատասխանում Ձեր սկզբնական պահանջներին (Դուք ընտրել եք ոչ ճիշտ Տեղեկանքի տեսակ/Քաղվածքի ժամանակահատված կամ նախապատրաստված Տեղեկանքը չի համապատասխանում Ձեր այլ ոչ ստանդարտ պահանջներին), ապա մասնաճյուղում Ձեզ համար կնախապատրաստվի նոր (այդ թվում ոչ ստանդարտ) Տեղեկանք/Քաղվածք՝ գանձելով/վերադարձնելով նախկինում գանձված միջնորդավճարի տարբերությունը: Եթե նոր Տեղեկանքի/Քաղվածքի համար նախատեսվում է անվճար սակագին, ապա գանձված միջնորդավճարը ենթակա է ամբողջությամբ հետ վերադարձի:

### Տեղեկանքի և քաղվածքի սակագներ

Քաղվածքի տրամադրում	Անվճար
ընթացիկ կամ նախորդ ամսվա համար	1900 ՀՀ դրամ*
2-ից 12 ամիս վաղեմության	1900 ՀՀ դրամ*
1 տարուց ավել վաղեմության	3900 ՀՀ դրամ*
<b>Տեղեկանքների տրամադրում Բանկի ստանդարտ տիպային ձևով</b>	
հայերեն լեզվով	2900 ՀՀ դրամ*
ռուսերեն և անգլերեն լեզուներով	3900 ՀՀ դրամ*
<b>Տեղեկանքների տրամադրում Բանկի ոչ ստանդարտ ձևով</b>	
5900 ՀՀ դրամ*	
<b>Բանկի կայքի միջոցով տեղեկանքի կամ քաղվածքի առցանց պատվիրման ծառայության դիմաց սակագին</b>	1000 ՀՀ դրամ (ի լրումն վերոնշյալ սակագների)*

\*ներառյալ ԱԱՀ